ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2018 թվականի N 70 -Ա

«ՍՅՈՒՆԻՔ - ԱՐՑԱԽ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ.«ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումների՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սյունիք-Արցախ մշակութային օրեր» մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել Սյունիք-Արցախ մշակութային օրեր» մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

19.07.2018

X

VERIFIED OCSP 19.07.2018 19:31 13 GMT+4

Подписано: HAMBARDZUMYAN KAREN 2611820473

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2018 թ. հուլիսի 11
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ.հուլիսի 11--ի
N 70-Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«Սյունիք-Արցախ մշակութային օրեր» միջոցառման

1. Կ.Համբարձումյան	ՀՀ Սյունիքի մարզպետ /նախագահ/
2. Ս.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
3. Մ.Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
5. Հ.Հարությունյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
6. Թ.Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
7. Վ. Արզումանյան	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ.հուլիսի 11-ի
N 70 Որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
«Սյունիք-Արցախ մշակութային օրեր» միջոցառման

Մեկնում Արցախի Հանրապետություն
Հանդիպում Գորիսում՝ միջոցառման սիսիանցի մասնակիցների հետ
Այցելություն Գորիս համայնք գ.Խնձորեսկ /ճոճվող կամուրջ/
Պսակադրություն և ծաղկեդրում Ստեփանակերտ քաղաքում՝ Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հուշարձանին
Այցելություն արցախցի զոհված ազատամարտիկների թանգարան /Ստեփանակերտ/
Մեկնում Մարտակերտի շրջան գյուղ Վանք /Գանձասար/
Հանդիպում Արցախի թեմի հոգևոր առաջնորդների հետ
Մոմավառություն Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում /Գանձասար/
Ցուցահանդես՝ Սյունիքը և Արցախը երիտասարդ նկարիչների աչքերով
Այցելություն Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների թանգարան
Ազգային խաղեր և ուրախ ժամանցի կազմակերպում
Մեկնում Արցախի Հանրապետության բերդաքաղաք Շուշի
Մոմավառություն Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում
Այցելություններ Շուշիի կերպարվեստի պետական թանգարան, Շուշիի երկրաբանության թանգարան, պատմության թանգարան, գորգերի թանգարան
Այցելություն Ա.Բակունցի տուն թանգարան /Գորիս/

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ.հուլիսի 11--ի
N 70 Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

«Սյունիք-Արցախ մշակութային օրեր» միջոցառման

Միջոցառման նպատակն է՝

Ներկայացնել մեր ազատ, անկախ Հայաստանի Հանրապետության և Արցախի կայացած լինելը, սերմանել մատաղ սերնդի մեջ հայրենիքի նկատմամբ սերն ու հավատը, հայրենասիրության գաղափարի դրսևորումը:

Արցախի Հանրապետության հասարակությանը ներկայացնել Սյունիքի մարզի արվեստի բնագավառի շնորհալի երեխաների, պատանի նկարիչների աշխատանքները, դպրոցների առարկայական օլիմպիադայի հանրապետական մրցույթի հաղթողներին ծանոթացնել Արցախի Հանրապետության պատմամշակութային հուշարձաններին:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Սյունիք-Արցախ մշակութային օրեր» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Սյունիք-Արցախ մշակութային օրեր» միջոցառմանը մասնակցում են Սյունիքի մարզի շնորհալի աշակերտներ, դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթող դպրոցականներ, մարզի տարածաշրջաններից հրավիրված պատանի նկարիչներ, անհատ կատարողներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումներն անց են կացվելու 2018 թվականին հուլիս ամսին Արցախի Հանրապետության Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ. Սարգսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. հուլիսի 11 -ի
N 70-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Սյունիք-Արցախ մշակութային օրեր» միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	235,0
2	Հանրային սննդի ծառայություններ	4236	370.0
3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	265.0
4	Մասնագիտական ծառայություններ	4241	30.0,0
	Ընդամենը		900,0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյան

Հավելված 5
ՀՀՍյունիքիմարզպետի
2018թ.հուլիսի 11--ի
N 70---Որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

«Սյունիք-Արցախմշակութայինօրեր»միջոցառման

h/h	Միջոցառմանանվանումը	Կատարմանժամկետը	Կատարմանվայրը
1	«Սյունիքը և Արցախըպատանինկարիչներիաչքերով» ցուցահանդես	հուլիս 2018թ	ԱրցախիՀանրապետությունք.Ստեփանակերտ
2	ՀանդիպումԱրցախիՀանրապետության արվեստի գործիչների հետ	հուլիս 2018թ	ԱրցախիՀանրապետությունք.Ստեփանակերտ
3	Պսակադրություն և մոմավառությունԱրցախյանպատերազմումզոհվածազատամարտիկներիշիրիմներին	հուլիս 2018թ	ԱրցախիՀանրապետությանք.Ստեփանակերտումև Շուշի քաղաքներում
4	Այցելություն ք. Ստեփանակերտ, Արցախցիզոհվածազատամարտիկներիթանգարան	հուլիս 2018թ	ԱրցախիՀանրապետությունք.Ստեփանակերտ
5	ՈՒխտագնացությունԱրցախիՀանրապետությանՄարտակերտիշրջանիգ.Վանք /Գանձասարվանականհամալիր/	հուլիս 2018թ	ԱրցախիՀանրապետությանՄարտակերտիշրջանիգ.Վանք /Գանձասարվանականհամալիր/
6	ԱյցելությունԱրցախիՀանրապետությանբերդաքաղաքՇուշի. ՄոմավառությունՍուրբԱմենափրկիչՂազանչեցոցեկեղեցում. ԱյցելություններՇուշիիկերպարվեստիպետական թանգարան, Շուշիիերկրաբանությանթանգարան,Շուշիիպատմությանթանգարան,գորգերիթանգարան	հուլիս 2018թ	ԱրցախիՀանրապետությանՇուշիքաղաք
7	ԱյցելությունԱ.Բակունցիտունթանգարան	հուլիս 2018թ	ՀՀՍյունիքիմարզԳորիսիհամայնք

ՀՀՍյունիքիմարզպետարանի
աշխատակազմիղեկավար Ռ. Սարգսյան